ԿԱՐԾԻՔ

ԱՐԱՄ ՑՈԼԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ Ը.00.02 – «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետության գյուղատնտեսությունն իր բացառիկ կարևորության հետ մեկտեղ, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ ոլորտում արդյունաբերականացման մակարդակը զգալիորեն ցածր է, մասնավորապես ցածր է գյուղատնտեսության արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակը, չափազանց դանդաղ տեմպերով են ներդրվում արդիական այնպիսի տեխնոլոգիաները, որոնք նախապայման են հանդիսանում գյուղատնտեսությունում արտադրողականության բարձրացման և ոլորտի արդյունաբերականացման համար:

Հաշվարկային տվյալները վկայում են, որ գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունում աշխատանքի արտադրողականությունը 9 անգամ, իսկ ընդհանուր վերցրած արդյունաբերությունում 7.1 անգամ գերազանցում է գյուղատնտեսության արտադրողականության ցուցանիշին: Ներկայացված տվյալները, մեկ անգամ ևս, վկայում են, որ հանրապետության գյուղատնտեսությունում՝ ոլորտի առանձնահատկություններով և այլ գործոններով պայմանավորված, ցածր է արդյունաբերականացման մակարդակը:

Շուկայական հարաբերությունների պայմաններում պահանջվում է վերանայել ոլորտում աշխատանքի արտադրողականության բարձրացման գործընթացի կառավարման ավանդական մոտեցումները: Աշխատանքի արտադրողականության մակարդակի և դինամիկայի վերլուծության հետ մեկտեղ, անհրաժեշտ է հետազոտել գյուղատնտեսության արտադրողականության վրա ազդող գործոնները: Կարևոր է բացահայտել ագրարային աշխատանքի արտադրողականության բարձրացման, արդյունքում արդյունաբերականացման ռեզերվները և դրանց կիրառման հնարավորությունները:

Գյուղատնտեսության արդյունաբերականացումը՝ իր և գյուղատնտեսության առանձնահատկություններով պայմանավորված, բարդ, ընդգրկուն և համեմատաբար մեծ ներդրումներ պահանջող գործընթաց է, հետևաբար գյուղատնտեսությունում տնտեսավարողները իրենց միջոցներով հիմնականում հնարավորություններ և անհրաժեշտ գիտելիքներ չունեն այդ գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Այստեղ առաջնահերթ անհրաժեշտ է ուղղորդված պետական քաղաքականության իրականացում:

Հանրապետության գյուղատնտեսությունում՝ շուկայական հարաբերությունների անցման մեկնարկի և հետագա ժամանակահատվածներում, գրեթե գործուն քայլեր չեն ձեռնարկվել գյուղատնտեսության արդյունաբերականացման ուղղությամբ: Շուկայական հարաբերություններին անցման ժամանակահատվածում հիմնականում չեն իրականացվել գյուղատնտեսության արդյունաբերականացմանն ուղղված ընդգրկուն ծրագրեր, առկա ծրագրերի խթանիչ էլեմենտը մեծ չէ, կիրառվող մեխանիզմներն անկատար են, հետևաբար վերջիններիս ուղղությամբ էական դրական տեղաշարժեր չկան և արդյունքները շոշափելի չեն:

Ստեղծված իրավիճակում հրատապ խնդիր է համակողմանի ուսումնասիրությունների հիման վրա գյուղատնտեսության ոլորտի արդյունաբերականացման մակարդակի բարձրացման տնտեսական հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման իրատեսական քայլերի ձեռնարկումը:

Նշվածն էլ պայմանավորում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունն ու կարևորությունը, որը բխում է հանրապետության գյուղատնտեսության զարգացման, առաջնահերթ անհրաժեշտ մթերքների արտադրության ծավալների ավելացման, դրանց որակի բարելավման և հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման պահանջներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ

Աշխատանքի **հիմնական նպատակը՝** Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման հիմնական ուղղությունների առաջադրումն է:

Նշված նպատակին համապատասխան, աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են որոշակի խնդիրներ որոնցից հիմնականներն են՝ գյուղատնտեսության արդյունա-

բերականացման էության և առանձնահատկությունների ուսումնասիրումը, գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտության և դրան նպաստման մոտեցումների հիմնավորումը, << գյուղատնտեսության առանձնահատկությունների և ոլորտի արդյունաբերականացման պայմանների վերլուծությունը, գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային փորձի և տեղայնացման հնարավորությունների ուսումնասիրումը, << գյուղատնտեսության արդյունաբերականացման ներկայիս նախադրյալների վերլուծությունը, հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների և գյուղատնտեսության արդյունաբերականացման գործոնների քանակական ազդեցության գնահատումը, գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունների առաջադրումը, գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետության գնահատումը:

Ատենախոսության հիմնական կառուցվածքային մասերը բխում են առաջադրված խնդիրներից: Ատենախոսությունը հիմնականում բաղկացած է երեք գլուխներից, որոնք ընդհանուր գծերով հետևյալն են:

Ատենախոսության առաջին՝ «Գյուղատնտեսության արդյունաբերականացման տեսական և մեթոդաբանական դրույթները» գլխում ներկայացվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման էությունը և առանձնահատկությունները, գյուղատնտեսության արդյունաբերականացման անհրաժեշտությունը և դրան նպաստման մոտեցումները, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները և ոլորտի արդյունաբերականացման պայմանները:

Ըստ հեղինակի գյուղատնտեսության արդյունաբերականացումը դա ոլորտի արտադրական գործընթացի կազմակերպումն է արդյունաբերական հիմունքներով՝ կիրառելով արտադրության արդիական տեխնիկական միջոցներ և տեխնոլոգիաներ:

Արդյունաբերականացումը՝ ինչպես տնտեսության տարբեր ոլորտներում, այնպես էլ գյուղատնտեսությունում, պահանջում է արտադրության գործընթացում չկիրառված առավել արդյունավետ տեխնոլոգիաների կիրառում, որակյալ աշխատուժի օգտագործում և այլն:

Հեղինակը հաշվի առնելով այն, որ արդյունաբերականացման մակարդակը բնութագրող ընդհանրական ցուցանիշ է աշխատանքի արտադրողականությունը, հետևաբար նախ ուսումնասիրվել է գյուղատնտեսության այն ցուցանիշների վերջին տարիների միտումները, որոնք պայմանավորում են ոլորտում աշխատանքի արտադրողականությունը:

Գյուղատնտեսության ոլորտի արդյունաբերականացման մակարդակի գնահատման համար համադրվել է ըստ ոլորտների աշխատանքի արտադրողականությունը:

Հեղինակը արդյունաբերականցման անհրաժեշտությունը դիտարկել է հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, պարենային անվտանգության, տեխնիկական տարբեր միջոցների ապահովվածության տեսանկյունից: ՈՒշագրավ է, որ հեղինակն այստեղ կատարել է գործոնային վերլուծություն:

ՈՒսումնասիրությունները վկայում են, որ արդյունաբերականացման անհրաժեշտությունն ակնհայտ է, որը իր բնույթով միտված է գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և երկրի պարենային անվտանգության ապահովմանը:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակը ուսումնասիրել է նաև գյուղատնտեսության առանձնահատկությունները և արդյունաբերականցման պայմանները:

Աշխատանքում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիտարկված առանձնահատկությունները զգալիորեն խոչընդոտում են գյուղատնտեսության արդյունաբերականացման գործընթացին՝ բարդացնելով արդյունաբերականացանն ուղղվող միջոցառումների իրականացումը:

Աշխատանքում դիտարկվել են նաև գյուղատնտեսության արդյունաբերականացման պայմանները: Այստեղ հեղինակը առաջնահերթ կարևոր է համարել գյուղացիական տնտեսությունների չափերը և դրանց թիվը, տեխնիկական տարբեր միջոցներով ապահովվածությունը և այլն:

<u>Ատենախոսության երկրորդ՝ «Գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային փորձը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսագիտական հիմնախնդիրները» գլխում</u> ներկայացվել են գյուղատնտեսության արդյունաբերականացման միջազգային փորձը, տեղայնացման հնարավորությունները, ՀՀ գյուղատնտեսության արդյունաբերականացման

ներկայիս նախադրյալները և արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները:

Աշխատանքի շրջանակներում հեղինակը ուսումնասիրել է գյուղատնտեսության արդյունաբերականացման բազմաթիվ զարգացած երկրների փորձը: Ըստ հեղինակի գյուղատնտեսության արդյունաբերականացման բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ տարբեր երկրներում գոյություն ունի արդյունաբերականացմանն ուղղված միջոցներ, մեխանիզմներ, տեխնոլոգիաներ որոնք որոշակի փոքր մասով կիրառություն ունեն հանրապետությունում, բացի այդ տեխնոլոգիաների գերակշռող մասը, համապատասխան պայմանների ստեղծման դեպքում, կարող է ներդրվել մեր հանրապետությունում:

Աշխատանքի տվյալ գլխում հանգամանալի դիտարկվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման նախադրյալները, մասնավորապես վերլուծվել են այն բոլոր ծրագրերը, որոնք շուկայական հարաբերությունների պայմաններում որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածությանը: Դիտարկվել է այդ ծրագրերի առանձնահատկությունները իրականացման ընթացքը, որը հնարավորություն է տվել գնահատելու առկա խնդիրները և առաջադրել դրանց բարելավման մոտեցումները:

Տվյալ գլխում հեղինակը ուսումնասիրել է նաև հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները, մասնավորապես դիտարկվել է 6 խումբ հիմնախնդիրներ: Գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրներն դիտարկվել են հանգամանալի՝ տարանջատված, դրանք բնութագրվել են չափելի ցուցանիշների հիման վրա, ինչպես նաև անդրադարձ է արվել նշված հիմնախնդիրները պայմանավորող 21 գործոնների բնութագրմանը:

<u>Աշխատանքի երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները» գլխում</u> ներկայացվել են գյուղատնտեսության արդյունաբերականացման գործոնների ազդեցության քանակական գնահատումը, գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների

լուծման հիմնական ուղղությունները, գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը:

ՈՒշագրավ է համարվում հեղինակի դիտարկումները գործոնային վերլուծությունների ուղղությամբ: Գյուղատնտեսության արդյունաբերականացման վրա տարբեր գործոնների ազդեցության քանակական գնահատման համար հեղինակը ելակետային տվյալները վերցրել է երկարատև ժամանակահատվածի՝ 15 տարվա համար: Հիմնավորված են արտադրողականության վրա ազդող գործոնների շրջանակը:

Ռեգրեսիոն մոդելների նշանակալիության ապահովման նպատակով վերլուծությունները կատարվել են առանձին-առանձին և ստացել են տրամաբանական արդյունքներ:

Եզրափակիչ գլխի կարևորագույն մասերից է գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղություններին վերաբերվող ուսումնասիրությունները, որի համար ելակետ է հանդիսացել նախորդ գլխում գնահատված 6 հիմնախնդիրները և դրանք պայմանավորող 21 գործոնները:

Աշխատանքում հանգամանալի և հիմնավորված մոտեցումներով առաջադրվել է վերը նշված հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները:

Աշխատանքում դիտարկվել են գյուղատնտեսությունում արդյունաբերականացմանն ուղղվող արդիական տեխնոլոգիաների ներդրման տնտեսական արդյունավետությունը: Մասնավորապես՝ դիտարկվել է ոռոգման արդիական տեխնոլոգիաների ներդրման, նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ջերմատնային տնտեսությունների, ինտենսիվ այգեգործության զարգացման, «խելացի» անասնաշենքերի ներդրման տնտեսական արդյունավետությունը:

Գյուղատնտեսության արդյունաբերականացմանն ուղղված տարբեր ուղղությունների (բաղադրիչների) արդյունավետության գնահատման ուղղությամբ կատարված հաշվարկները վկայել են արդյունաբերականացմանն ուղղված քայլերի բարձր արդյունավետության մասին:

Աշխատանքի արդյունքային դրույթները ամփոփվել են եզրակացությունների մասում:

Ատենախոսությունը շարադրված է 164 էջի վրա, ներառում է 36 աղյուսակ և 4 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության հիմնական նորույթը կայանում է նրանում, որ գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների բացահայտման արդյունքում՝ կանխորոշվել են դրանց լուծման հիմնական ուղղությունները: Հիմնական գիտական նորույթները հետևյալն է.

- ՀՀ գյուղատնտեսության առանձնահատկությունների համատեքստում գնահատվել են ոլորտի արդյունաբերականացման պայմանները և գործոնները,
- բացահայտվել են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները,
- գնահատվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման վրա ազդող մի շարք գործոնների քանակական ազդեցությունը,
- մշակվել են գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները,
- գնահատվել է գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը:

Ընդհանուր առմամբ, ատենախոսին հաջողվել է լուծել իր վրա դրված խնդիրները և ներկայացնել ամփոփ գիտական աշխատանք:

Միաժամանակ, աշխատանքի ուսումնասիրությունից բացահայտվել է որոշ բացթողումներ, որոնք հիմնականում հետևյալն են:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Աշխատանքի առաջին գլխի «Գյուղատնտեսության արդյունաբերականացման էությունը և առանձնահատկությունները» 1.1. բաժնում ատենախոսը սեփական դիտարկումների և մասնագիտական գրականության ուսումնասիրման հիման վրա հանգամանալի ներկայացրել է գյուղատնտեսության արդյունաբերականացումն բնութագրող դրույթները: Տվյալ բաժնի երկրորդ մասը, որը վերաբերվում է գյուղատնտեսության արդյունաբերականացման առանձնահահատկություններին առավել ամբողջական կլիներ, եթե այդ առանձնահատկությունների շարքում հեղինակը որպես առանձին առանձնահատկություն դիտարկեր նաև «գյուղատնտեսության արտադրական գործընթացների ճշգրիտ հաջորդականության, կատարման

ժամկետների և ագրոտեխնիկայի ու անասնապահությունում ընդունված կանոնների պահպանման անհրաժեշտությունը»:

2. Ատենախոսության երկրորդ գլխի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները» 2.3. բաժնում հեղինակը որպես գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրներ դիտարկել է արդյունաբերականացման գործընթացի ֆինանսական ապահովումը, գյուղատնտեսությունում տնտեսությունների փոքր չափերը, տնտեսավարման ձևերի և ենթակառուցվածքների զարգացման անհրաժեշտ մակարդակի ապահովումը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների գիտելիքների և հմտությունների առկայության ապահովումը, պետությունմասնավոր հատված համագործակցության կատարելագործումը, արդյունաբերականացմանը միտված պետական ծրագրերի մեխանիզմների կատարելագործում: Մեր կարծիքով աշխատանքի տվյալ հատվածը շահած կլիներ, եթե այդ տնտեսական հիմնախնդիրների շարքում հեղինակը ընդգրկեր և ուսունասիրեր նաև «արդյունաբերականացմանն ուղղված գյուղատնտեսությունում տնտեսավարողների խթանման մեխանիզմների ներդրումը»:

3. Աշխատանքի եզրափակիչ գլխի «Գյուղատնտեսության արդյունաբերականացման գործոնների ազդեցության քանակական գնահատումը» 3.1. բաժնում հեղինակը ուշագրավ ուսումնասիրություններ է իրականացրել արդյունաբերականացման վրա տարբեր գործոնների քանակական գնահատման ուղղությամբ: Հաշվարկներում որպես գործոն հատկանիշ վերցրել է առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալները, պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացումների ծավալները, գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության միջին մակարդակը, գյուղատնտեսական ծագման արտադրանքների արտահանման ծավալները: Մեր կարծիքով աշխատանքի տվյալ բաժինը առավել ամբողջական կլիներ եթե որպես ազդող գործոններ դիտարկվեր նաև գյուղատնտեսական արտադրանքի արտադրողների իրացման գների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների և մատուցվող ծառայությունների սակագների ինդեքսները:

4. Ատենախոսության երրորդ գլխի «Գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները» 3.2. առանցքային համարվող բաժնում հեղինակը հանգամանորեն, հիմնավորված մոտեցումներով առաջադրել է դիտարկված տնտեսական հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները: Գյուղատնտեսության արդյունաբերականացման գործընթացի ֆինանսական ապահովման հիմնախնդրի լուծման համար հեղինակը դիտարկել է մի քանի ուղղություններ, որոնցից է մասնավորապես պետական աջակցության ծրագրերի բարելավման ուղղությունները: Աշխատանքի տվյալ հատվածը մեր կարծիքով առավել շահած կլիներ եթե հեղինակը պետական ծրագրերի բարելավման ուղղությունների մեջ դիտարկեր նաև այդ ծրագրերի շրջանակում դրանց իրականացման ընթացքում տնտեսավարողներին խորհրդատվական աջակցության համար ֆինանսական բաղադրիչի անհրաժեշտության հարցը:
5. Ատենախոսության նույն գլխի «Գյուղատնտեսության արդյունաբերականացման առաջարկվող ուղղությունների տնտեսական արդյունավետությունը» 3.3. բաժնում հեղինակը մանրակրկիտ հաշվարկներով արդյունաբերականացման առանձին ուղղությունների արդյունավետությունը դիտարկել է տարբեր մշակաբույսերի կաթիլային ոռոգման, ջերմատնային տնտեսության, ինտենսիվ պտղատու և խաղողի այգիների, խելացի անասնաշենքի ներդրման օրինակով: Ջերմատնային տնտեսության համար արդյունավետությունը գնահատվել է 500 մ^2 մակերեսով ապակեպատ, պոլիկարբոնատային, մեկ շերտ և երկշերտ պոլիեթիլենային ջերմատների համար: Հաշվի առնելով գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը նպատակահարմար կլիներ արդյունավետությունը գնահատել նաև առավել փոքր (200 կամ 250 մ^2) մակերեսով տարբեր ծածկոցով ջերմատների համար:

Հիշատակված բացթողումները էականորեն չեն անդրադառնում աշխատանքի արժանիքների վրա և աշխատանքի ուսումնասիրությունից հանգել ենք հետևյալ եզրակացության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արամ Ցոլակի Հովհաննիսյանի հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման արդիական է ու հրատապ: Հեղինակը հաջողությամբ լուծել է առաջադրված խնդիրները:

Աշխատանքում ուսումնասիրվել և ներկայացվել են ՀՀ գյուղատնտեսության արդյունաբերականացման հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների տեսական և գործնական հարցերը: Ատենախոսը հիմնավորված մեթոդական մոտեցումների կիրառմամբ կարողացել է լուծել առաջադրված խնդիրները:

Ատենախոսության սեղմագիրը և հրապարակված հոդվածները բխում են աշխատանքի բովանդակությունից:

Ատենախոսության արդյունքային դրույթները կարող են օգտագործվել հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից գյուղատնտեսության արդյունաբերականացմանն ուղղված ծրագրերի և այդ բնագավառում քաղաքականության մշակման, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների և ուսումնական նպատակների համար:

Արամ Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արդյունաբերականացման տնտեսական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով ատենախոսությունն իր գիտական մակարդակով, հիմնավորվածությամբ և կիրառական նշանակությամբ համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին և հեղինակը արժանի է՝ Ը.00.02.- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԱԱՀ-ի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Հ.Ս. Ծպնեցյան**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Ս. Ծպնեցյանի ստորագրությունը հաստատում եմ՝ ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի քարտուղար
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Գ.Վ. Ավագյան**

15.12.2020թ.